

## Ազատ տնտեսական գոտուն հարող տարածքի կառուցման ներդրումային ծրագիր




### **Ծրագրի նկարագիրը**

Ծրագրի նպատակն է ազատ տնտեսական գոտուն հարող տարածքում ստեղծել համապատասխան միջավայր՝ ապրելու, աշխատելու և հանգիստը կազմակերպելու համար: Նշված տարածքում 2013 թվականի օգոստոսից գործում է Հայաստանում առաջին ազատ տնտեսական գոտին երկու ուղղություններով՝ բարձր տեխնոլոգիաներ և նոր տեխնոլոգիաների արտադրություն:

Այս ծրագրի արդյունքում նշված տարածքում կկառուցվի բազմագործառնության համալիր, որտեղ նախատեսված է հիմնել տեխնոլոգիական գիտարտադրական գոտի, կառուցել բնակելի շենքեր, կրթական և մշակութային կառույցներ, բիզնես կենտրոններ, առևտրային սրահներ, ժամանցի և հանգստի կենտրոններ:

Ներդրումային ծրագրի շրջանակում առաջարկվում է բնակելի շենքերի խմբի, հասարակական սպասարկման և առևտրային կենտրոնների կառուցում, ինչպես նաև խառը կառուցապատում: Տարածքը զբաղեցնում է 464.5 հա:



### **Տեխնիկական ցուցանիշներ**

**Բնակելի շենքերի խմբի կառուցում**  
Նախատեսվում է կառուցել բազմահարկ կառուցապատման երեք բնակելի թաղամասեր (շուրջ 67.3 հա) և առանձնատնային բնակելի թաղամաս (շուրջ 26.5 հա):

**Հասարակական սպասարկման և առևտրային կենտրոններ**  
Գոտիավորման նախագծի համաձայն նախատեսվում է 22.1 հա տարածքում 5-9 հարկանի առևտրային կենտրոնների կառուցում: Այստեղ նախատեսվում է կառուցել հանրախանութներ, ռեստորաններ և սրճարաններ, կենցաղապասարկման առաջնային ծառայությունների, առևտրի կետեր և այլն: Հասարակական գործառնության բազմաֆունկցիոնալ կենտրոնների համար գոտիավորման նախագծով (շուրջ 24 հա) նախատեսված է թանգարանների, ցուցասրահների, գրադարանների, արվեստի կենտրոնների, առողջապահական կենտրոնի, անհատական գրասենյակների, ֆինանսական և ապահովագրական

հաստատությունների, հյուրանոցների, ժամանցի վայրերի, մանրածախ առևտրի խանութների, հասարակական սննդի կետերի կառուցում:

**Խառը կառուցապատում**

Խառը կառուցապատման նպատակով շուրջ 15 հա տարածքի վրա նախատեսվում է 5-15 հարկանի մոտ 30 շենքի կառուցում՝ բնակելի և հասարակական նշանակությամբ: Բնակելի շենքերի առաջին հարկերում և հարակից տարածքներում միաժամանակ նախատեսվում է բիզնես կենտրոնների, սպասարկման սրահների, սրճարանների և/կամ ռեստորանների կառուցում:



**Ծրագրի ժամկետներ**

Ծրագրի իրականացման ժամկետը 3 տարի է: Հնարավոր է ծրագիրն իրականացնել նաև փուլային տարբերակով:

**Ծրագրի արժեքը**

Շինարարական աշխատանքների արժեքը կախված է նախագծային լուծումներից:

**Ներդրումների ձևը և հիմնական պայմանները**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի հողատարածքների իրավական կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում: Երևանի քաղաքապետարանը կաջակցի նաև իրացման ծրագրի կազմման և գործընթացի կազմակերպման գործում:

**Ներկա իրավիճակ**

Առկա է «Երևան նախագիծ» ՓԲԸ կողմից մշակված կառուցապատման էսքիզային նախագիծ: